

ՀԱՐԱՏՈՒԹԵԱՆ ՃՇՄԱՐԻՏ ԻՄԱՅՈՒՄԸ

Հարստութիւնդ եթէ Աստուծո՛վ առի՛ր, վստահ եղի՛ր եւ հաւատա՛, որ գաւակիդ կրկին առատութեամբ կուտայ եթէ ուզես: Պիտի ըսես, ի՞նչպէս եթէ ուզեմ: Ինչ որ Աստուծո՛վ պարգեւ առիր եւ ունիս դարձեալ Աստուծոյ պարգեւէ, իսկ գաւակիդ բարեպաշտութեանդ օրինակը ձգէ եւ ոչ թէ հարստութիւնդ: Աղքատներու երամին ըրած գթութեանդ անոր վերակացու ձգէ Աստուծոյ անսահման գթութիւնը եւ ոչ թէ փայլուն ոսկին: Սորվեցո՛ւր ողորմութեան բարիքը եւ ոչ թէ տմարդութեան չարիքը: Սորվեցո՛ւր զԱստուած պաշտել եւ ոչ թէ մամոնան: Սորվեցո՛ւր երկնաւոր բաներու ցանկալ եւ ոչ թէ երկրաւորներուն, Վարժեցո՛ւր պատուասէր ըլլալ երկնային պատիւին եւ ոչ թէ մեր սին կեանքի ծաղկաթափ փառքին: Սորվեցո՛ւր սիրել ոչ թէ առօրեայ անցաւոր կեանքը՝ լի դառնութեամբ ու թշուարութեամբ, այլ՝ կայունը, մնայունը եւ բիւրապատիկ հանգիստով լեցունը: Իսկ եթէ անիրաւութենէ, գրկանքներէ հաւաքած հարստութիւնդ գաւակներուդ պիտի թողուս, գիտցի՛ր եւ հաւատա՛ թէ ուր որ անիրաւութիւն եւ գրկանք կայ, հոն Աստուծոյ բարկութիւնը կը գտնուի: **Սարգիս Շնորհալի (Յորդորակներ)**

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

Ս.ՍՏՈՒԾՄՈՎ ՊԱՅՔԱՐԻՆՔ ՍԱՏԱՆԱՅԻՆ ԴԷՄ

Մենք կարիքը ունինք Բարիին որպէսզի կարենանք դէմ դնել Չարին: Սատանան աստուածատէրներուն դէմ է, որ կը պատերազմի հետեւաբար անոր պատերազմը Աստուծոյ դէմ ուղղուած պատերազմ մըն է: Մեր կողքին ունենալու ենք աներեւելի Աստուած որ բնաւ չի ննջեր եւ չի մրափեր, այլապէս պիտի չկարենանք կանգուն մնալ սատանային արձակած աներեւելի նետերուն դէմ: Աղօթքով զԱստուած մեզի պատերազմակից դարձնենք: Աղօթքով հըրեշտակները մեր շուրջ դնենք իբրեւ ցանկապատ: Աղօթքով մեր դատը դնենք անպարտելի ու անհակաճառելի մեր Փաստաբանին ու Բարեխօսին ձեռքերուն մէջ: Աղօթելը Աստուծոյ վստահիլ է, իսկ Աստուծոյ վստահող մարդը՝ յուսախաբ պիտի չըլլայ:

Միրելի ընթերցող, ճՐԱԳ քերքը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- [facebook-ի էջ jerak ճրագ քերք](#)



ՔՈՒ ԽՕՍԲԴ ԽՄ ՈՏԹԵՐՈՒՄ ԾՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԾԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԱ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 16 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018 ԹԻՒ 50

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄԵՐ
Ես.38.1-8: Երբ .1.1-14:
ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ 17.1-10

Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Գայթակղութիւններ անպայման, որ պիտի պատահին, բայց վա՛յ այն մարդուն, որուն ձեռքով ուրիշներ գայթակղութեան մէջ կ'իյնան: Նախընտրելի պիտի ըլլար, որ իր վզին ջաղացքի քար անցընէին եւ զինք ծովը նետէին, քան թէ այս փոքրիկներէն մէկը գայթակղեցնէր: Հետեւաբար, զգուշացէ՛ք: Եթէ եղբայրդ մեղք գործէ՝ յանդիմանէ՛ զինք, եւ եթէ զղջայ՝ ներէ՛ իրեն: Նոյնիսկ եթէ մէկ օրուան մէջ եօթն անգամ քեզի դէմ մեղանչէ եւ եօթն անգամ քեզի գալով ըսէ՝ կը զղջայ, պէտք է ներես իրեն»:

Առաքեալները ըսին Տիրոջ. «Աւելցո՛ւր մեր հաւատքը»:

Յիսուս ըսաւ. «Եթէ մանանեխի հատիկին չափ հաւատք ունենաք եւ ըսէք այս թե՛նիհինըսէք. «Արմատախիլ եղի՛ր եւ ծովուն մէջ տնկուէ՛», վստահ եղէ՛ք, որ պիտի հնազանդի ձեզի: Ենթադրենք, որ ձեզմէ մէկը ծառայ մը ունի, որ հողագործ է կամ հովիւ: Երբ ծառան դաշտէն դառնայ եւ տուն մտնէ, տէրը իրեն կ'ըսէ՞. «Անմիջապէս գնա՛, ճաշդ կե՛ր»: Բնականաբար՝ ո՛չ: Ընդհակառակը, անոր կ'ըսէ. «Ընթրիքս պատրաստէ՛ եւ գոգնոցդ կապելով սպասարկէ՛ ինձի, մինչեւ ընթրիքս վերջացնեմ. անկէ ետք կրնաս ուտել ու խմել»: Կը կարծէ՞ք, որ տէրը իր ծառային երախտապարտ պէտք է ըլլայ իր հրահանգները կատարելուն համար: Չեմ կարծեր: Դուք ալ նոյնպէս, երբ կը կատարէք ի՛նչ որ հրամայուած է ձեզի, ըսէ՛ք. «Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտաւոր էինք ընել՝ կատարեցինք»:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՃԱՇՈՒ ԸՆԹԵՐՅՈՒՄ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ ԵՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ 1.1-14

Անցեալին բազմաթիւ անգամներ եւ բազմաթիւ կերպերով Աստուած մեր հայրերուն խօսեցաւ մարգարէներուն միջոցաւ, իսկ այս վերջին օրերուն մեզի խօսեցաւ իր Որդիին միջոցաւ: Աստուած զինք ամէն բանի ժառանգորդ կարգեց եւ անոր միջոցաւ էր, որ աշխարհը ստեղծեց: Որդին, Հօրը փառքին լոյսը եւ անոր էութեան ճշգրիտ պատկերը, որ իր անձով մեր մեղքերը սրբել է եւ կրկին մէջ նստաւ Աստուծոյ՝ Գերագոյն Զօրութեան աջ կողմը:

Անիկա շատ աւելի բարձր է հրեշտակներէն, ինչպէս Աստուծոյ իրեն տրուած անունը ցոյց կու տայ, որովհետեւ ո՞ր մէկ հրեշտակին Աստուած ըսաւ. «Դուն իմ որդիս ես, այսօր քեզ ծնայ»: Կամ որո՞ւ ըսաւ. «Ես անոր հայր պիտի ըլլամ եւ անիկա՝ ինծի որդի»: Դարձեալ, երբ իր անդրանիկ Որդին աշխարհ կը դրկէր, ըսաւ. «Աստուծոյ բոլոր հրեշտակները թող պաշտեն զայն»:

Աստուած իր հրեշտակներուն մասին խօսած ատեն կ'ըսէ. «Աստուած իր հրեշտակները ստեղծեց, որպէս պատգամաւոր հոգիներ, եւ իր պաշտօնեաները՝ կրակի բոցի պէս»:

Մինչդեռ Որդիին կ'ըսէ. «Քու աթոռդ, ո՛վ Աստուած, յաւիտենական է. արդարութեամբ կ'իշխես թագաւորութեանդ վրայ: Արդարութիւնը կը սիրես եւ անիրաւութիւնը կ'ատես: Ահա թէ ինչու, ո՛վ Աստուած, էու Աստուածդ ուրախութեան իւղով օծեց քեզ էու ընկերներէդ աւելի»:

Դարձեալ, ուրիշ տեղ մը Որդիին կ'ըսէ. «Դուն, ո՛վ Տէր, սկիզբէն ստեղծեցիր երկիրը, եւ երկինքը էու ձեռագործդ է:

Անոնք պիտի կորսուին, բայց դուն կաս եւ կը մնաս:

Անոնք հագուստի պէս պիտի մաշին, վերարկուի մը պէս պիտի ծալես զանոնք եւ հագուստի պէս փոխես: Բայց դուն միշտ նոյնն ես եւ էու տարիներդ վերջ պիտի չունենան»:

Բայց հրեշտակներէն որո՞ւն ըսաւ երբեք. «Աջ կողմս նստէ, մինչեւ թշնամիներդ ռոտերուդ տակ դնեմ որպէս պատուանդան»:

Զէ՞ որ հրեշտակները Աստուծոյ ծառայող հոգիներ են եւ իր կողմէ կը դրկուին օգնելու համար անոնց՝ որոնք փրկութիւնը պիտի ժառանգեն:

ՄԻԱՄՆԱԲԱՐ ԱՂՕԹԵՆԸ
Տէ՛ր, ողորմէ՛ բազմամեղիս, ապաշխարութեան դարձի՛ բեր վտարանդի գերիս եւ մտցո՛ւր արքունական փառքին մէջ: Առաջնորդէ՛ Քու մօտդ գալու երկնային ճանապարհով, որովհետեւ եթէ դուն չառաջնորդես, ես չեմ կրնար գալ, որովհետեւ դո՛ւն իսկ ըսիր . «Ոչ որ կրնայ մօտս գալ, եթէ Հայրս չքաշէ զայն»:
Եւ արդ, Տէ՛ր իմ գթած, մի յիշեր իմ բազում պիղծ մեղքերս եւ մի՛ անտեսեր Քու ծառայ, մի՛ ձգեր զիս որ մնամ նոյն չարիքին մէջ եւ դեգերիմ աշխարհիկ կեանքի մէջ, այլ ինչպէս փախած ծառայի ետեւէն ընթանալով՝ այնպէս զիս ե՛տ բեր, թողութիւն տուր յանցանքներուս եւ հաղո՛րդ դարձո՛ւր Քու սուրբ կամարարներուդ:
Եփրեմ Ասորի

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ



Ս. ՅԱԿՈԲ ՄԾԲԵԱՅ ՀԱՅՐԱՊԵՏ

Մեր Եկեղեցւոյ ամէնէն աւելի ժողովրդականութիւն ունեցող սուրբերէն մէկն է՝ Սուրբ Յակոբ Մծբնացի Հայրապետը: Իր տօնը կանուխէն հաստատուած է Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին մէջ ու կը տօնուի ամէն տարի՝ Դեկտեմբեր ամսուան կէսերուն եւ միշտ՝ Ծաբաթօրուան կը զուգադիպի:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ԿԵԱՆՔԸ

Սուրբ Յակոբ ծնունդով սաորի էր եւ հօրաբոջ որդին՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչին: Անոնք միասին դաստիարակուած էին Կեսարիոյ մէջ:

Ան իր բարոյներով, հրաշագործութիւններով եւ ճգնաւորի խիստ կեանքով՝ նշանաւոր եղած է: Մասնակցած է Նիկիոյ մէջ կայացած ժողովին՝ 325 թուականին:

Մծբնի Աթոռին համար՝ ձեռնադրուած է եպիսկոպոս, ինչպէս Աստուած տեսիլքի մը մէջ յայտնած էր՝ Մարուգէ ճգնաւորին:

Գրած է վարդապետական գառեր, բարոյախօսական գրութիւններ եւ մատենագրութեան մէջ ծանօթ «Զգօն» գիրքը:

Ս. Գրիգոր Նարեկացին, ներքող մը նուիրած է Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետին: Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետ «Յաղթող եւ Սուրբ Հայրապետ» շարականը նուիրած է Ս. Յակոբին: Այս շարականը գրուած է ա՛յն դէպքին առթիւ, ուր կը պատմուի, թէ Պարսից Շապուհ Բ. Թագաւորը, աշխարհաժաւալ իր արշաւանքներու ընթացքին՝ կը հասնի Մծբն: Այն ատեն, Սուրբը կ'աղօթէ, եւ ահա պիծակներու եւ ձիաստացներու մեծ բազմութիւն մը կը յարձակի պարսիկներու ձիերուն վրայ եւ անոնք խուճապի մատնուելով՝ կը փախչին, իսկ զինուորները՝ հետիոտն կը նահանջեն:

Հարց. Ի՞նչ խորհուրդ ունի Յիսուսի Ծնունդը եւ Մկրտութիւնը:

Պատասխան՝ Տօները կը բաժնուին երկու մասի՝ Առաքելադիր եւ Հայրապետագիր: Առաքելադիր տօներէն են Ծննդեան, աստուածայայտնութեան, Մկրտութեան, Համբարձման, Հոգեգալստեան եւ Քրիստոսին վերաբերող միւս տօները, որոնք սահմանած են առաքելները: Միւս տօները սահմանած են Եկեղեցւոյ հայրապետները: Հայ Եկեղեցին ունի հինգ մեծ տօներ (Տաղաւարներ, Աստուածամօր վերափոխումը, Խաչվերացը: Եւ այսպէս, առաջին տաղաւարը Յիսուսի Ծննդեան տօնն է: Աստուած մարդացաւ, մարդոց մեղքերը վերցուց, չարչարուեցաւ եւ մահուան դատապարտուեցաւ մեզի համար, որ յաւիտենական կեանքի արժանացնէ: Հայերը այդ տօնը՝ Ծնունդը, աստուածայայտնութեան եւ մկրտութեան հետ միասին կը կատարեն Յունուար 6-ին: Մկրտութիւնը յիշատակն է Յորդանան գետին մէջ Անոր մկրտուելուն՝ Յովհաննէս Մկրտիչի ձեռնով: Աստուածայայտնութեան տօն կը կոչուի, որովհետեւ Աստուծոյ փառքը յայտնուեցաւ մեզի: